ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15 մարտի 2011թ. N --- Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով և 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<21. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը նիստի օրակարգի նախագիծը և դրանում ընդգրկված իրավական ակտի նախագիծն ու դրան կցված փաստաթղթերը մեկ օրվա ընթացքում տրամադրում է Քաղաքապետի նշանակած Գլխադասային հանձնաժողովին, տեղադրում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում և տրամադրում է ավագանու անդամներին, քաղաքապետարանի աշխատակազմին և ավագանու մյուս մշտական հանձնաժողովներին։

Գլխադասային հանձնաժողովը ավագանու հերթական նիստից առնվազն երկու օր առաջ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում նախագծի վերաբերյալ իր եզրակացությունը, որը նույն օրը էլեկտրոնային փոստով տրամադրվում է ավագանու անդամներին և քաղաքապետարանի աշխատակազմին։>>:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու իրավական ակտերի ընդունման ընթացակարգը պարզեցնելու և որոշումների նախագծերի քննարկման փուլն առավել արդյունավետ դարձնելու համար Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Գործող իրավական ակտում փոփոխվող կետերն են.

1) Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» որոշման հավելվածի **21-րդ կետը**, որը շարադրել է հետևյալ բովանդակությամբ

Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը Իրավական ակտի նախագիծը և դրան կցված փաստաթղթերը մեկ օրվա ընթացքում տրամադրում է Քաղաքապետի նշանակած Գլխադասային հանձնաժողովին, տեղադրում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում, տրամադրում է ավագանու անդամներին, քաղաքապետարանի աշխատակազմին և ավագանու մյուս մշտական հանձնաժողովներին։

Գլխադասային հանձնաժողովը ավագանու հերթական նիստից առնվազն երկու օր առաջ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում նախագծի վերաբերյալ իրենց եզրակացությունը։ Նույն ժամկետում նախագծի վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել ավագանու անդամները և մյուս մշտական հանձնաժողովները։

2) Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» հ.1-Ն որոշման հավելվածի հետևյալ կետերը.

22-րդ կետ-Նախագծի վերաբերյալ ստացված կարծիքները և /կամ/ առաջարկությունները Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը նույն օրը տրամադրում է նախաձեռնության հեղինակին՝ երկօրյա ժամկետում, իր հայեցողությամբ լրամշակելու և Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին ներկայացնելու համար։ Նախաձեռնության հեղինակը լրամշակված նախագծին կցում է տեղեկանք-ամփոփաթերթ, որում նշվում են նախագծի վերաբերյալ ստացված առարկությունները և /կամ/ առաջարկությունները ընդունելու կամ չընդունելու իր հիմնավորումները։ Եթե ներկայացված կարծիքները առարկություններ և /կամ/ առաջարկություններ չեն պարունակում, ապա այդ մասին ևս նշվում է տեղեկանք-ամփոփաթերթում։

23-րդ կետ - Քաղաքապետի կողմից Իրավական ակտի նախագիծը հերթական նիստի օրակարգ ընդգրկելուց հետո, Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը նույն օրը այն տրամադրում է գլխադասային Հանձնաժողովին՝ Ավագանու նիստից առնվազն երկու օր առաջ եզրակացություն տրամադրելու համար։

24-րդ կետ-Լրամշակված նախագիծը, տեղեկանք-ամփոփաթերթը և գլխադասային Հանձնաժողովի եզրակացությունը Ավագանու նիստից առնվազն երկու օր առաջ տրամադրվում է Ավագանու անդամներին։

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ